Հավելված 5

«ԷԱՃԱՊՁԲ ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/15 »* ծածկագրով

էլեկտրոնային աճուրդի հրավերի

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/15-3

ք. Երևան ____/_____/2025թ.

« ՀՀ Արարատի մարզ Մասիսի համայնքապետարան »-ը ի դեմս Դավիթ Համբարձումյան ի, որը գործում է « ՀՀ Արարատի մարզ Մասիսի համայնքապետարան »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և « Լուսինե Թամրազյան ԱՁ »-ը, ի դեմս տնօրեն Լուսինե Թամրազյան ի, որը գործում է « Լուսինե Թամրազյան ԱՁ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։ Սույն կետում նշված արձանագրությունը կազմում է պայմանագրի անբաժանելի մասը։ Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով։

2. **ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից մինչև հրավերը հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ընտել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով

ապրանքի բնույթից և նշանակությունից։

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը։

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները։

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը։

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները։

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը։

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով։

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում։

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք։

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր։

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը։

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը։

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը։

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին։

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 3401085.00 AMD(երեք միլիոն չորս հարյուր մեկ հազար ութսունհինգդրամ) ՀՀ դրամ :629[1]

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը։

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը։

730[2]

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով։ Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի

30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

-

4. **ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

—

8 31[3]

5. **ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ»

ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. **ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորորդական*) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի *0,5* (*զրո ամբողջ հինգ տասնորդական*) տոկոսի չափով:[9] 3[4]Ընդ որում

տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով

կատարումը։

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը [5]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության։ Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության։

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար։ Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է։

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում։

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը։

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման։

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3,N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

__

10. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ԳՆՈՐԴ

ՀՀ Արարատի մարզ Մասիսի համայնքապետարան

Արարատի մարզ քաղաք Մասիս

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

900432000348

04240324

Digitally signed by HAMBARDZUMYAN DAVIT 1708860835
Date: 2025.01.27 12:44:00 AMT

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Լուսինե Թամրազյան ԱՁ

Արմավիրի մարզ Փարաքար Բարեկամության Փ.Տ. 43

ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ

2470019887700000

52186155

Digitally signed by TAMRAZYAN LUSINE 5910730077
Date: 2025-01-23 12:30:35

/ստորագրություն/

Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

[1]29 6 *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[2]30 7 *Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[3]31 8 *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

[4]*9 Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[5]10 *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[6]11 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[7]12 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

[8]13 *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
____/_____/2025թ. կնքված
ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/15 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

Ապրանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ֆիրմայի անվանում*	տեխնիկական բնութագիրը
11	15311100/13	Կարտոֆիլ՝ միջին չափսի	Գյուղմթերք, Գյուղմթերք, Գյուղմթերք	Վաղահաս կամ ուշահաս՝ սեզոյնայնությամբ պայմանավորված, 1-ին տեսակի, չցրտահարված, չծլած, կլոր կամ ձված և առանց վնասվածքների, նեղ մասի տրամագիծը 4 սմ-ից ոչ պակաս, տեսականու մաքրությունը՝ 90 %-ից ոչ պակաս, փաթեթավորումը՝ կտորի, ցանցի կամ պոլիմերային պարկերով: Անվտանգությունն ըստ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի և կանոնակարգերի պահանջների: Կցված է 57348e2f.rar
14	03222130/	Սերկևիլ	Գյուղմթերք,	Սերկևիլ թարմ, պտղաբանական I խմբի, առանց վնասվածքների:

	13		Գյուղմթերք, Գյուղմթերք	Անվտանգությունն ըստ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի և կանոնակարգերի պահանջների: Կցված է b34b9f8a.rar
16	15331167/14	Կանաչի խառը	Գյուղմթերք, Գյուղմթերք, Գյուղմթերք	Թարմ վիճակում, խառը տեսակների: Անվտանգությունն ըստ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի և կանոնակարգերի պահանջների: Կցված է 15d9953c.rar
24	03221122/18	Դդմիկ	Գյուղմթերք, Գյուղմթերք, Գյուղմթերք	Դդմիկ թարմ, ամբողջական, անվնաս և առողջ: Անվտանգությունն ըստ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի և կանոնակարգերի պահանջների: Ըստ սեզոնի՝ սեպտեմբերից-նոյեմբեր: Կցված է 17e05ce7.rar
25	15331168/12	Սմբուկ	Գյուղմթերք, Գյուղմթերք, Գյուղմթերք	Թարմ, ամբողջական, մաքուր, անվնաս և առողջ: Անվտանգությունն ըստ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի և կանոնակարգերի պահանջների: Ըստ սեզոնի՝ սեպտեմբերից-նոյեմբեր: Կցված է 28b7564c.rar
26	03221430/14	Բրոկոլի	Գյուղմթերք, Գյուղմթերք, Գյուղմթերք	Թարմ, անվնաս և առողջ: Անվտանգությունն ըստ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի և կանոնակարգերի պահանջների: Ըստ սեզոնի՝ սեպտեմբերից-նոյեմբեր: Կցված է d87aca14.rar
27	03221420/11	Ծաղկակաղամբ	Գյուղմթերք, Գյուղմթերք, Գյուղմթերք	Թարմ, անվնաս և առողջ: Անվտանգությունն ըստ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի և կանոնակարգերի պահանջների: Ըստ սեզոնի՝ սեպտեմբերից-դեկտեմբեր: Կցված է c5ebcd6a.rar
30	03221124/14	Վարունգ	Գյուղմթերք, Գյուղմթերք, Գյուղմթերք	Թարմ, անվնաս և առողջ: Անվտանգությունն ըստ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի և կանոնակարգերի պահանջների: Ըստ սեզոնի՝ հուլիսից-նոյեմբեր: Կցված է 382bb472.rar

31	15331139/13	Լոլիկ	Գյուղմթերք, Գյուղմթերք, Գյուղմթերք	Թարմ, անվնաս և առողջ: Անվտանգությունն ըստ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի և կանոնակարգերի պահանջների: Ըստ սեզոնի՝ հուլիսից-նոյեմբեր: Կցված է f58e2ed9.rar
32	15871256/25	Քաղցր պղպեղ	Գյուղմթերք, Գյուղմթերք, Գյուղմթերք	Թարմ, անվնաս և առողջ: Անվտանգությունն ըստ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի և կանոնակարգերի պահանջների: Ըստ սեզոնի՝ հուլիսից-նոյեմբեր: Կցված է 7a41856a.rar
33	03222131/12	Ծիրան	Գյուղմթերք, Գյուղմթերք, Գյուղմթերք	Ծիրան թարմ, պտղաբանական I խմբի, անվնաս և առողջ: Անվտանգությունն ըստ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի և կանոնակարգերի պահանջների: Ըստ սեզոնի՝ հուլիսից-օգոստոս: Կցված է 096bb460.rar
34	03222129/14	Տանձ	Գյուղմթերք, Գյուղմթերք, Գյուղմթերք	Տանձ, պտղաբանական I խմբի, անվնաս, առողջ և հյութալի: Անվտանգությունն ըստ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի և կանոնակարգերի պահանջների: Ըստ սեզոնի՝ սեպտեմբերից-դեկտեմբեր: Կցված է 38f73c4f.rar
35	03222116/11	Կիվի	Գյուղմթերք, Գյուղմթերք, Գյուղմթերք	Կիվի, անվնաս, առողջ և հյութալի: Անվտանգությունն ըստ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի և կանոնակարգերի պահանջների: Ըստ սեզոնի՝ սեպտեմբերից-դեկտեմբեր: Կցված է 5790f6b9.rar
36	03221122/19	Դդում	Գյուղմթերք, Գյուղմթերք, Գյուղմթերք	Թարմ, ամբողջական, մաքուր, առողջ: Անվտանգությունն ըստ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի և կանոնակարգերի պահանջների: Կցված է a6d721d5.rar
37	03221115/10	Կանաչ լոբի	Գյուղմթերք, Գյուղմթերք,	Թարմ, մաքուր, առողջ, չթոռոմած և անվաս: Անվտանգությունն ըստ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի և այլ

			Գյուղմթերք	նորմատիվ իրավական ակտերի և կանոնակարգերի պահանջների: Ըստ սեզոնի՝ հուլիսից-հոկտեմբեր: Կցված է 89123308.rar
40	03222133/11	Բալ	Գյուղմթերք, Գյուղմթերք, Գյուղմթերք	Բալ թարմ, անվնաս, առողջ և հյութալի, պտղաբանական I խմբի: Անվտանգությունն ըստ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի և կանոնակարգերի պահանջների: Ըստ սեզոնի՝ հուլիսից-սեպտեմբեր: Կցված է f793e225.rar
42	15332240/13	Մարմելադ	<<ԱՐՏՍՎԻԹ>>ՍՊԸ, <<ԱՐՏՍՎԻԹ>>ՍՊԸ, <<ԱՐՏՍՎԻԹ>>ՍՊԸ	Էներգետիկ արժեքը 100մլ-ում՝ 308կկալ/1309կՋ, սննդային արժեքը 100մլ-ում՝ սպիտակուցներ՝ 0.1գ, ճարպեր՝ 0.1գ, ածխաջրեր՝ 76.7գ, գործարանային փաթեթավորմամբ: Անվտանգությունը և մակնշումը ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի և կանոնակարգերի պահանջների: Պիտանելիության ժամկետը՝ նվազագույնը 1 ամիս: Կցված է 985bc09c.rar
44	15821500/48	Թխվածքաբլիթ /կուրաբյե/	<<ԱՐՏՍՎԻԹ>>ՍՊԸ, <<ԱՐՏՍՎԻԹ>>ՍՊԸ, <<ԱՐՏՍՎԻԹ>>ՍՊԸ	Կաթնահունց, շաքարահունց, խոնավությունը՝ 3%-ից մինչև 10%, շաքարի զանգվածային պարունակությունը՝ 20% -ից մինչև 27%, յուղայնությունը՝ 3%-ից մինչև 30%: Անվտանգությունը և մակնշումը ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի և կանոնակարգերի պահանջների: Պիտանելիության ժամկետը՝ նվազագույնը 20 օր: Կցված է e44fb107.rar
45	03221129/8	Սպանախ	Գյուղմթերք, Գյուղմթերք, Գյուղմթերք	Թարմ, մաքուր, առողջ, չթոռոմած, գյուղատնտեսական վնասատուներից չվնասված: Անվտանգությունն ըստ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի և կանոնակարգերի պահանջների: Կցված է 048688ba.rar

46	03212200/7	Կանաչ ոլոռ չոր	«Արաս Ֆուդ» ՍՊԸ, «Արաս Ֆուդ» ՍՊԸ, «Արաս Ֆուդ» ՍՊԸ	Թարմ, մաքուր, առողջ, չթոռոմած, գյուղատնտեսական վնասատուներից չվնասված: Անվտանգությունն ըստ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի և կանոնակարգերի պահանջների: Կցված է 3356c133.rar

* Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:

ԳՆՈՐԴ
ՀՀ Արարատի մարզ Մասիսի համայնքապետարան
Հասցե՝ Արարատի մարզ քաղաք Մասիս
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
900432000348
04240324
Դավիթ Համբարձումյան
_____
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
Լուսինե Թամրազյան ԱՁ
Հասցե՝ Արմավիրի մարզ Փարաքար Բարեկամության Փ.Տ. 43
ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ
2470019887700000
52186155
Լուսինե Թամրազյան
Digitally signed by TAMRAZYAN LUSINE 5910730078
Date: 2025-01-25 12:51:28
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by HAMBARDZUMYAN DAVIT 1708860835
Date: 2025.01.27 12:44:26 AMT

Հավելված N 2
____/_____/2025թ. կնքված
ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/15 ծածկագրով պայմանագրի

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
					հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
11	կիլոգրամ	150.00	1057500.00	7050	Մատակարարման հասցեները կից ներկայացվում են	7050	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2025թ.
14	կիլոգրամ	653.29	53570.00	82	Մատակարարման հասցեները կից ներկայացվում են	82	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2025թ.
16	կիլոգրամ	2498.37	1369110.00	548	Մատակարարման հասցեները կից ներկայացվում են	548	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2025թ.
24	կիլոգրամ	181.33	5440.00	30	Մատակարարման հասցեները կից	30	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու

					ներկայացվում են		օրվանից մինչև 30.06.2025թ.
25	կիլոգրամ	247.00	7410.00	30	Մատակարարման հասցեները կից ներկայացվում են	30	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2025թ.
26	կիլոգրամ	850.00	17000.00	20	Մատակարարման հասցեները կից ներկայացվում են	20	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2025թ.
27	կիլոգրամ	250.00	12500.00	50	Մատակարարման հասցեները կից ներկայացվում են	50	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2025թ.
30	կիլոգրամ	269.40	175110.00	650	Մատակարարման հասցեները կից ներկայացվում են	650	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2025թ.
31	կիլոգրամ	268.09	146110.00	545	Մատակարարման հասցեները կից ներկայացվում են	545	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2025թ.
32	կիլոգրամ	293.64	41110.00	140	Մատակարարման հասցեները կից ներկայացվում են	140	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2025թ.
33	կիլոգրամ	247.50	14850.00	60	Մատակարարման հասցեները կից ներկայացվում են	60	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև

							30.06.2025թ.
34	կիլոգրամ	577.75	23110.00	40	Մատակարարման հասցեները կից ներկայացվում են	40	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2025թ.
35	կիլոգրամ	1088.87	87110.00	80	Մատակարարման հասցեները կից ներկայացվում են	80	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2025թ.
36	կիլոգրամ	370.00	3700.00	10	Մատակարարման հասցեները կից ներկայացվում են	10	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2025թ.
37	կիլոգրամ	787.28	55110.00	70	Մատակարարման հասցեները կից ներկայացվում են	70	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2025թ.
40	կիլոգրամ	485.00	16975.00	35	Մատակարարման հասցեները կից ներկայացվում են	35	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2025թ.
42	կիլոգրամ	1000.00	75000.00	75	Մատակարարման հասցեները կից ներկայացվում են	75	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2025թ.
44	կիլոգրամ	1165.36	221420.00	190	Մատակարարման հասցեները կից ներկայացվում են	190	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2025թ.

45	կիլոգրամ	350.00	3500.00	10	Մատակարարման հասցեները կից ներկայացվում են	10	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2025թ.
46	կիլոգրամ	618.00	15450.00	25	Մատակարարման հասցեները կից ներկայացվում են	25	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2025թ.

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ
ՀՀ Արարատի մարզ Մասիսի համայնքապետարան
Հասցե՝ Արարատի մարզ քաղաք Մասիս
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
900432000348
04240324
Դավիթ Համբարձումյան
_____
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
Լուսինե Թամրազյան ԱՁ
Հասցե՝ Արմավիրի մարզ Փարաքար Բարեկամության Փ.Տ. 43
ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ
2470019887700000
52186155
Լուսինե Թամրազյան
Digitally signed by TAMRAZYAN LUSINE 5910750078
Date: 2025-01-25 12:52:29
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by HAMBARDZUMYAN DAVIT 1708860835
Date: 2025.01.27 12:44:53 AMT

Հավելված N 3
____/_____/2025թ. կնքված
ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/15 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			Հնվ.	Փտր.	Մրտ.	Ապր.	Մայ.	Հուն.	Հուլ.	Օգս.	Սեպ.	Հոկ.	Նոյ.	Դեկ.	Ընդամենը
11	15311100/13	Կարտոֆիլ՝ միջին չափսի												1057500.00	1057500.00
14	03222130/13	Սերկևիլ												53570.00	53570.00
16	15331167/14	Կանաչի խառը												1369110.00	1369110.00
24	03221122/18	Դդմիկ												5440.00	5440.00
25	15331168/12	Սմբուկ												7410.0	7410.0

														0	0
26	03221430/14	Բրոկոլի												17000.00	17000.00
27	03221420/11	Ծաղկակաղամբ												12500.00	12500.00
30	03221124/14	Վարունգ												175110.00	175110.00
31	15331139/13	Լոլիկ												146110.00	146110.00
32	15871256/25	Քաղցր պղպեղ												41110.00	41110.00
33	03222131/12	Ծիրան												14850.00	14850.00
34	03222129/14	Տանձ												23110.00	23110.00
35	03222116/11	Կիվի												87110.00	87110.00
36	03221122/19	Դդում												3700.00	3700.00
37	03221115/10	Կանաչ լոբի												55110.00	55110.00
40	03222133/11	Բալ												16975.00	16975.00
42	15332240/13	Մարմելադ												75000.00	75000.00
44	15821500/48	Թխվածքաբլիթ /կուրաբյե/												221420.00	221420.00
45	03221129/8	Սպանախ												3500.0	3500.0

														0	0
46	03212200/7	Կանաչ ոլոռ չոր												15450.00	15450.00

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ

ՀՀ Արարատի մարզ Մասիսի համայնքապետարան

Հասցե՝ Արարատի մարզ քաղաք Մասիս

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

900432000348

04240324

Դավիթ Համբարձումյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Լուսինե Թամրազյան ԱՁ

Հասցե՝ Արմավիրի մարզ Փարաքար Բարեկամության Փ.Տ. 43

ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ

2470019887700000

52186155

Լուսինե Թամրազյան

Digitally signed by TAMRAZYAN LUSINE 5910730078
Date: 2025-01-25 12:55:18

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by HAMBARDZUMYAN DAVIT 1708860835
Date: 2025.01.27 12:45:18 AMT

Հավելված N 4
____/_____/2025թ. կնքված
ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/15 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «____» 20___ թ.
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20__թ.
Պայմանագրի համարը՝ ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/15-3
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «_____» 20___թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
11	Կարտոֆիլ՝ միջին չափսի							

14	Սերկևիլ							
16	Կանաչի խառը							
24	Դդմիկ							
25	Սմբուկ							
26	Բրոկոլի							
27	Ծաղկակաղամբ							
30	Վարունգ							
31	Լոլիկ							
32	Քաղցր պղպեղ							
33	Ծիրան							
34	Տանձ							
35	Կիվի							
36	Դդում							
37	Կանաչ լոբի							
40	Բալ							
42	Մարմելադ							
44	Թխվածքաբլիթ /կուրաբյե/							
45	Սպանախ							
46	Կանաչ ոլոռ չոր							

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված N 4.1
____/_____/2025թ. կնքված
ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/15 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ Արարատի մարզ Մասիսի համայնքապետարան -ի (այսուհետ՝ Գնորդ) և Լուսինե Թամրազյան ԱՁ (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ._____ -ին կնքված N ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/15-3 պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով

Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
Կարտոֆիլ՝ միջին չափսի	կիլոգրամ	
Սերկևիլ	կիլոգրամ	
Կանաչի խառը	կիլոգրամ	
Դդմիկ	կիլոգրամ	
Սմբուկ	կիլոգրամ	
Բրոկոլի	կիլոգրամ	
Ծաղկակաղամբ	կիլոգրամ	
Վարունգ	կիլոգրամ	
Լոլիկ	կիլոգրամ	
Քաղցր պղպեղ	կիլոգրամ	
Ծիրան	կիլոգրամ	
Տանձ	կիլոգրամ	
Կիվի	կիլոգրամ	
Դդում	կիլոգրամ	
Կանաչ լոբի	կիլոգրամ	
Բալ	կիլոգրամ	
Մարմելադ	կիլոգրամ	
Թխվածքաբլիթ /կուրաբյե/	կիլոգրամ	
Սպանախ	կիլոգրամ	
Կանաչ ոլոռ չոր	կիլոգրամ	

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____

ազգանուն, անուն

_____

Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____

ազգանուն, անուն

_____

Ստորագրություն